

Հետեւեալ զրուածեան վերայ ընթերցողաց և մանաւանդ յեւնէաս աղագայնոց ուշադրութիւն կհրահարեմք:

ՅԻԳՏԻՐԷ:

«Մի մեկնասի ծնունդը՝ տասն ուսումնականի ծնունդ յառաջ կը բերէ, ասած են խմատասէրք: զոր լապտեր ի ձեռին առեալ կը խնդրեմ, պատուական ամսածիւթի միջոցաւ, զի առանց մեկնասի և բարեբաւի մեր կեանքն ապարդիւն կը լինի: Վասն որոյ այն ազգարարութեան հետ՝ հեղինակածս գրեանց ցանկն հրատարակելու հաճեցէք աղգասիրարար, կամ բարեբաւ ձեռն մի գտնել՝ ի լոյս ընծայելու, կամ նպաստող բաժանորդներ, և կամ ծախքն և արդիւնքն բարեբաւին սեպհականելով՝ միայն հարկւր օրինակ մեզ հեղինակութեան վարձք շնորհելով:

Ցանկ հետեւեալն է:

Ա. Քերականութիւն համառօտ, տպեալ ի Վարաք, 500 օրինակ, 1885, և այժմ՝ իսպառ սպառեալ, իւր զիւրօսանելի ոճին համար, որով վեց ամիս կատարեալ կարէ ուսանել աշխատասէրն, 150 դասի բաժանեալ, հարց—պատասխանով և կանոններն աշխարհաբառ աւանդած դիւրին միտք պահելու համար, 140 երեսէ բաղկացեալ. սակայն Բ. տպագրութեան պատրաստածս փորձառութեամբ կատարելագործեալ և սրբագրեալ:

Բ. Ճարտասանութիւն, հաւաքեալ ի զանազան հեղինակաց, նմանապէս հարց—պատասխանով և կանոններն աշխարհաբառ աւանդած՝ դիւրին միտ պահելու համար իսկ օրինակներն գրաբառ և ամենալոյսի հեղինակներէ և մատենագիրներէ հաւաքած, 300 երեսէ բաղկացեալ:

Գ. Հրահանգ տաղաչափութեան (ոտանաւոր գրելու) և բանաստեղծութեան, նոյնպէս հարց—պատասխանով, կանոններն աշխարհաբառ աւանդած դիւրին միտ պահելու համար, իսկ օրինակներն գրաբառ, 80 երեսէ բաղկացեալ:

Դ. Ողբերգութիւն Վարդանայ Մամիկոնէի, 100 երեսէ բաղկացեալ, և ի վան ներկայացուցեալ, 80 երեսէ բաղկացեալ:

Ե. Ողբերգութիւն Արեւի, Սեմերի բանաստեղծութիւնն ողբերգութեան ձեռի դարձնելով, 80 երեսէ բաղկացեալ:

Ղ. Յովսէփ գեղեցիկ, թատերգութիւն, պարզ աշխարհաբառ, ի վան ներկայացուցեալ, բաղկացեալ է 50 երեսէ:

Ե. Պատակերգ. խաբերայից, }  
Ը. Պատակերգ բանտապետի } ի միաս. 100 եր.  
Թ. Պատակերգ փաստաբանի } բաղկացեալ:

Ժ. «Ես դատելի», անուն տետրակ, ընդ զէմ մեք խօսիմք դուք դատէք, անուն բողոքական տետրակի, չարաչար խայտառակելով նոցա չար աղանդն:

Ն. ՍԱՐԳԻՍ ԲԱՐՍԵՂԻԱՆ ԳՆՈՒՆԷ,

Դասաւոր Ս. Վարդանեանց վարժարանի Հայոց յեղի:

Հետեւեալ նամակը թէպէտ անկողմնակալութեամբ կհրատարակեմք, սակայն չկարեմք մեր ցաւակցութիւնքը քօղարկել նամակագրին անվայելուչ մի ընթացքի համար՝ որ երբէք օգուտ չընծայիր Աստուծոյ մերադնէից և ոչ պատիւ նամակագրին ինքեան, թող զատուարակութեան նկատմամբ առթած մեծ վնասը:

Առայժմ այսքան կրեմք և կաղաչեմք՝ յուսալով որ յիշեալ Պարոն կղգայ իւր ահա՛ս ընթացքը, և հեռատեսութեամբն և քաղցրութեամբ հրաժեշտ կըտայ զրաջան և վնասապարտ ընդդիմութենէ:

ՊԱՏԱՍԻԱՆԻ «ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ» 1875 ԹՈՒԱԿ.

47 № ՍՈՒՐ—ՍԷՐԻ ԵՕԳՈՒԱԾԻՆ:

Աղգիս պատմութեան էջերը տխրապէս վկայումն թէ՛ մեր բարօրութեան, պարծանաց և վայելչութեան, ոչինչ այնքան խանգարիչ չէ հանդիսացել ո՛րքան անմիաբանութիւնը և սիւղիքոր անձանց ստորաբարձ նախանձու կիրքը. Համոզուած և ձայնակից են արդի դարուս մի բնագետին հետ՝ թէ ամենայն ինչ բնութեանս մէջ կրկ-

նուսմէ, և ցաւօր սրտի պիտի առեմ որ մեր ազգի տխուր հանգամանքը ևս այդ կրկնութեանն է ենթակայ :

« Ենդու Հայաստանի, 1873 թուականի 47-րդ համարում կարգումեն մի այրպիտի կրիւք գրած յօդուած. հեղինակը սորա է Սուր—Սէրը : Պ. Սէրը ասումէ՝ իբր ես Ատորախանայ մայր եկեղեցւոյ կարեւոր նորոգութեան ժամանակ, 1-ի-2-է-3 է՝ զարգարել եկեղեցին մարմարոնեայ և զարվարաղիայ գուներով : Այս պարբերութեան մէջ բառս « կամեցել է, » հեղինակը չգիտեմ ինչ պատճառաւ է գործ դրել. ես և իմ նման երեցփոխաններ երբէք չեն ունեցել իրաւունք կամենալի, առանց նախապէս ժողովրդի համաձայնութեան : 1879 թիւ Հոկտեմբերի 13, երբ ժողովուրդը ընտրեց ինձ երեցփոխան. սոցանից քանի մի անձինք յորդորեցին ինձ, որ հոգացողութիւն առնեմ եկեղեցին պատշաճաւոր կերպիւ զարգարելոյ և նորոգելոյ նորա խախուտ տեղերը, և ես սուրբ պարտականութիւն համարեցի 1870 թիւ Մարտի 16, Պ. Նահանգապետի լծըլուութեամբ կազմուած ժողովում յայտնել Հայ հասարակութեան. որոյ հաճութեան բազմաստորագիր համախօսականն այդ նորոգութեան և զարգարանաց մասին նոյն իսկ ժողովում ստացայ, եւ այդ առթիւ ընտրեցան քանի մի անձինք իբր վերակացուք նորոգութեան : Ահա պարզ երևումէ՝ որ ոչ թէ իմ կամքն է եղել, այլ ժողովրդի Բայց եթէ ասեմ Սուր—Սէրը ամենեւին գործից անտեղեակ, ստիպեալ ի կրից, 1-ի-2-է-3 է սուտ և զրպարտութիւն խօսել իմ վերայ, այդ ուղիղ կերեւի իմ ազգայնոց, ժողովրդի համախօսական, հանդերձ պատկերաւ ծախուց 16, 665 ռուբլի 70 կոպ. և ոչ 20, 000 ռուբլի՝ որպէս գրումէ լուս ուղտ շինելով Պ. Սէրը, առաջարկեցաւ տեղոյս Կոնսիստորիալին և անտի ի Սինօդն սրբոյ Էջմիածնի : Այս մասին Կոնսիստորիայն ի 21 Յուլիսի 1871 թիւ № 981, տամ է տեղեկութիւն վերակացուաց, կցորդելով թէ՛ Առնապետ Կոնսիստորիայի պատուիրել է ևս կազմել պատկեր ծախուց երկու խորանները մեծացնելոյ՝ որ իսպառ խախտեալ են և զգեստը մաքուր և անվնաս պահելոյ տեղ չկայ : Կոնսիստորիայի կցորդ առաջարկու

կու թիւն ժողովուրդը անհամաձայն գտաւ : Իսկ 1873 թիւ Մարտի 12 № 386 ծանոց Կոնսիստորիայն՝ Սինօդն սրբոյ Էջմիածնայ հրամանաւ ի 13 Սեպտեմբերի 1872 թիւ 2594, տամ է լուծումն գործ դնելոյ եկեղեցական գումարից 16,665 ռուբլի 70 կոպ վասն նորոգութեան՝ աւելի քան վեց ամիս անցանելուց յետոյ : Երկրորդ պարբերութեան մէջ կամենալով աւելի ազդուութիւն տալ քանին, ասումէ Պ. Սէրը. — Ոմանք ողջամիտ հոգեւորականներից և ժողովրդականներից անհամաձայն են գտնուում այդ քանակութեամբ ծախս առնելու, պէն է սին զարգարանքի համար՝ խոստանալով ի նորոյ ժողովել 7000 ռուբ \* ) :

Առ աւելի լաւ երեւի երեցփոխանական պաշտօնիս խղճիւ կատարելը, և թէ Հայ ժողովրդոց հաւատարմութիւնը իմ վերաւ, մանաւանդ այդ նորոգութեան վերաբերութեամբ, կենդրեմ՝ ընթերցողաց ուշադրութիւնը այդ հանգամանաց վերայ : Երեցփոխանական պաշտօնիս առաջին եռամեայ ժամանակակէտը չլրացած՝ 1872 թիւ Մարտի 9, երբ առտնին հանգամանքից ստիպուած, խնդրեցի հաշուառութեան ժամանակ՝ որ ինձ այդ պաշտօնից արձակ համարեն, ժողովուրդը միահամուր բազմութեամբ թախանձեցին ինձ մնալ մինչ ցըլըանալ եռամեայ ժամանակիւ — գրելով համախօսակի մէջ — « ի Նկատի ունենալով մեր զանաւանձիր ջանակուռ պաշտօնատարութիւն նորա յօգուտ և ի փառս Տաճարին Աստուծոյ . . . » « վերստին միահաճ կամօք և ցանկութեամբ խնդրեցաք մնալ ի պաշտաման գէթ ցըլումն եւրից ամաց : » Յետ այդ ժամանակակէտից երբ 1873 թիւ Մարտի 1, կամեցայ ալձակուել, ժողովուրդը վերահասութիւն գործելով հաշիւներին՝ դարձեալ խնդրեց, որ մնամ նոյն պաշտօնում : Ահա համախօսականի խօսքերը. — « Տեսանելով զքերմեռանդ և արդիւնաւոր ծառայութիւն նորա և ի նկատի ունենալով զարուեստեալ գործ վերանորոգութեան Աստուածամօր եկեղեցւոյ և

(\*) Այս մասին կտրեւոր պատուէր և տնօրէնութիւն ևս եղաւ անցեալ տարի :

«կրթական, բարեօք վարկաբ խնդրել զնա մնալ  
 «ի պաշտաման . . . վասն որոյ համահաճ  
 «խորհրդով ընտրելով զնա վերստին առ ապա-  
 «գայ երիս ամս, և յն Այս խօսքերը գրելով չկարծեն  
 ընթերցողք, որ ես սնապարծ մարդ եմ և կամիմ  
 սորանցով իմ պատշաճ պատասխանի ճանապար-  
 հից շեղել. ամենևին ոչ, այլ իմ միտքն է Սուր  
 Սէրի տարածած կասկածներն փարատել իմ  
 հայրենակցաց սրտերից: Յետոյ Պ Սուր—Սէրը  
 գրում է իբր ես բարկացել եմ և իմ բարկութեա-  
 նըս հետևանքն այն է եղել, որ Յուլիանի մինչ  
 ցայժմ ուսումնարանին հասանելու դրամաբաժին  
 նրն») 811 թուրքի չեմ տուել, ես երբէք ոչ մի  
 պործունէութեանս մէջ բարկութեան կիրք չեմ  
 գործ դրել, և ուսած եմ սանձ զնել իմ կրից,  
 ոչ որպէս Պ. Սէրը զակատեալ կոյր կրից մէջ՝ չէ  
 հասկանում թէ ի՞նչպիսի քաղաքականութեամբ  
 կվայելէ խօսել: Ուսումնարանին դրամաբաժինն  
 տալը ես ամենևին չեմ կարծել բարկութեամբ.  
 այդ շատ սխալ է: Այլ զգուշացել եմ ինձ ա-  
 պահովելու Պ. Սէրի նման մարդիկ լեզուից, որոնք  
 սովոր են չարը բարի մեկնել և անդրադարձ: Երբ  
 տեղեկացայ, որ գրաւոր եղանակաւ չկար ժողո-  
 վըդի հաճութիւնը այդ դրամաբաժին մասին,  
 ապա զրեցի Վոնսիստորիային, որ նա ապահովէ ինձ  
 ժողովրդիս համախօսականով: Վոնսիստորիայն,  
 փոխանակ իմ օրինաւոր պահանջս կատարելոյ,  
 պատասխանումէ, թէ «2ունիմ ես իրաւունք ինք-  
 նակամօրէն կարծել տւել թիւն դրամաբաժնի, և  
 ամենևին Հայ ժողովրդին չէ ծանուցանում\*\*»),  
 Վինդրեմ Պ. Սէրից մէկնաբանէ, — ո՞վ է մեր  
 մանուկների բարոյական սննդեան կարեւոր նիւթն  
 արգելում, երեցփոխանն թէ Վոնսիստորիայն: Այս  
 խօսքերից յետոյ ես խորհուրդ կտայի Պ. Սուր—  
 Սէրին՝ որ նա իւր սեփական տեսանկիւքով նայի

գործին և զգուշանայ այսուհետեւ փոխանակ գրել  
 ծայրը թանաքի մէջ թանաքով թոյնի մէջ չձգէ—  
 այդպիսի թմու բառերով դրամաբաժին չխօսէ:  
 Երկրորդ յօդուածում մի և նոյն թուահամարի  
 մէջ առումէ Պ. Սուր Սէրը — «Եկեղեցւոյ օրա-  
 հում նորոգելու կրպակների համար նշանակած է  
 11000 թուրքի . . . չաւարտած և կապած  
 կրպակները երաշխաւօր են այդ գումարի տոկոսի-  
 քին թէ ոչ, և կարելի է իմանալ դորա էու-  
 թիւնը կանոնաւոր կերպով մի լրագրի մէջ: Բա-  
 նից ինչպէս երևումէ, Պ. Սուր—Սէրը շատ հոգա-  
 ցող մարդ է և փառված է նորա սրտի մէջ ազգա-  
 տիրութեան կայծը. ի վերայ այս ամենայնի ան-  
 համբեր է ևս: Վերակացուք շինութեան, որոց  
 թուում և ես կամ, մինչև գործի վախճանը պար-  
 տաւոր չեն և չեն ևս կարող կատարեալ հաշիւ  
 տալ ժողովրդին, թող թէ մի անձին պահանջ-  
 մամբ լրագրի մէջ տպել: Բայց խնայելով Պ.  
 Սուր Սէրի անհամբերութեանը, ծանուցանումեմ  
 ի դիմաց ընկերակցաց ի միամտութիւն Պարոնի  
 սրտին: Ծախուց պատկերաւ թէ և նշանակած է  
 11,000 թուրքի, բայց յոյս կայ՝ որ շատ պակա-  
 տով աւարտի գործը. իսկ գումարի տոկոսեաց ե-  
 րաշխաւորութեան մասին, այսքանս կասեմ, — 660  
 թուրքի կրպակներ տուած են վարձով և անկաս-  
 կած ենք, որ յետ նորոգութիւնից մինչև 2000  
 թուրքի տարեկան եկամուտ պիտի լինի. տոկոսեաց  
 հաշիւն թողում Պ. Սուր—Սէրի իմաստասիրու-  
 թեանը, թող նա ինքն ասէ խղճմանօք՝ 2000  
 թուրքին քանի՞ 11000 ի տոկոս է:

Այսպէս հանգամանօրէն պատասխանի պատ-  
 ճառն էր՝ ճշմարտութիւնը հանդիսացնել (մա-  
 նաւանդ օտար քաղաքացւոց աչքում բայց Աստ-  
 րախանցւոց քաջածանօթ է):

ԱՍՏՈՒԱՆԱՏՈՒՐ ԻԼԵԱԶԵԱՆՅ.

Ի 13 Յունիս 1874.

Ս. Կարախան.

(\*) Թէ և Սուր Սէրը գրումէ 800 թուրքի, բայց սխալ է,  
 405 թուրքի.— 50 կոպէ:

(\*\*) Ինչպէս մեր նամակագիրներէն մին հաղորդած է,  
 Յունիս 11 ին ժողովրդեան կողմանէ 26 պատուաւոր ան-  
 ձանց ներկայութեամբ ժողով և օրագիր եղած է յայտմ մա-  
 սին, բայց Պ. Իւնագեանց առանց ստորագրելոյ, ժողովէն  
 մեկնած է . . .